ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. ապրիլի 5-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **02.04.2023թ-ի «Արարատ-աղջիկներ»-«Նոա-աղջիկներ» (ԿԱԽ1-026) խաղի ժամանակահատվածում «Արարատ-աղջիկներ» թիմի ոչ ամբողջական կազմով խաղին ներկայանալը, խաղը անավարտ մնալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «Արարատ աղջիկներ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝5,000 ՀՀ դրամի չափով:

2. **02.04.2023թ-ի «Աշտարակ 2 դպ.»-«Քուչակ» (ԿՄ10ԱԳ-007) խաղին «Քուչակ» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Քուչակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Քուչակ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

3. **01.04.2023թ-ի «ՖԱ Կիլիկիա»-«ՖԱ Տիգրանակերտ» (ՍՖԱ-018) խաղին «ՖԱ Տիգրանակերտ» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ՖԱ Տիգրանակերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 50-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Տիգրանակերտ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Տիգրանակերտ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

4. **02.04.2023թ-ի «Արագած աղջիկներ 1»-«Կարբի-12» (ԿՄ12ԱԳ-008) խաղին «Կարբի-12» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կարբի-12» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Կարբի-12» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

5. **01.04.2023թ-ի «Փյունիկ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-122) խաղին «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արայիկ Էլոյանի (22601) կողմից կոպիտ խախտում թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արայիկ Էլոյանի (22601) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը և Կանոնակարգի 41-րդ հոդվածի 14-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 1 խաղով և «Տեխնիկական կենտրոն/ Ֆուտբոլի ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

6. **02.04.2023թ-ի «Իջևան-07»-«Արարատ-2-07» (16Բ-039) խաղին «Արարատ-2-07» թիմի ուշ ներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-2-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

7. **02.04.2023թ-ի «Էկովիլ ֆզ»-«Թիմ ՖԱՖ» (ՖՁԲԽ-004) խաղին «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտբոլիստ Գրիշա Խաչատրյանի կողմից (4604) կողմից խաղը սպասարկող անձնակազմի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը, հրելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Թիմ ՖԱՖ» թիմի ֆուտբոլիստ Գրիշա Խաչատրյանի կողմից (4604) կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 49-րդ հոդվածի 19-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

8. 01.04.2023թ.-ի «Շիրակ»-«Վան» (ՊԼ-125) խաղի ժամանակահատվածում «Վան» թիմի ֆուտբոլիստ Գևորգ Նաջարյանի (43900) կողմից գնդակի համար պայքարում կոպիտ խախտում թույլ տալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վան» թիմի ֆուտբոլիստ Գևորգ Նաջարյանի (43900) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը և Կանոնակարգի 41-րդ հոդվածի 14-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 1 խաղով և «Վան ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

9. 02.04.2023թ-ի «Արարատ-Արմենիա»-«Նոա» (ՊԼ-124) խաղի ժամանակահատվածում 1) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ անելը, 2) հյուր թիմի երկրպագուների կողմից ճայթրուկներ պայթացնելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1. Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ տուգանել «Արարատ-Արմենիա» ԲԲԸ-ին նվազագույն աշխատավարձի մինչև քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով:
2. Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի մինչև հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

   Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա» ԲԲԸ-ին նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

10. 02.04.2023թ-ի «Ուրարտու»-«Ալաշկերտ» (ՊԼ-121) խաղի ժամանակահատվածում դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից ճայթրուկներ պայթացնելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ տուգանել «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին նվազագույն աշխատավարձի յոթանասունհինգապատիկի՝ 75,000 ՀՀ դրամի չափով:

11. **30.03.2023թ-ի «Արարատ-Արմենիա 2»-«Շիրակ 2» (ԱԽ-127) խաղի ժամանակահատվածում դարպասներից մեկի ցանցի ոչ բարվոք վիճակի պատճառով խաղն ուշացումով սկսելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետը՝ տուգանել «Արարատ-Արմենիա» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»: